ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 30-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 36-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2020 թվականի սեպտեմբերի 23-ի «Ոստիկանության պարեկային ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» թիվ 36-Լ հրամանի հավելվածի 43-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«43. Պարեկային ծառայությունն իրականացվում է շուրջօրյա՝ առավելագույնը 12 ժամ տևողությամբ հերթափոխերով: Հերթափոխերի քանակը որոշում է Պարեկային ծառայության պետը՝ ելնելով ծառայողական խնդիրների իրականացման անհրաժեշտությունից:»:

ԳՆԴԱՊԵՏ **Վ.ՂԱԶԱՐՅԱՆ**

25 06 2021թ.

ք. Երևան